

Հայտարարություն ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգի կապակցությամբ

Մարտի 7, 2012

Ի կատարումն 2012 թվականի հունվարի 31-ին ԿԸՀ-ի կողմից հաստատված՝ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգի, այս օրերին ընթանում է լրագրողների հավատարմագրումը: Թեև սույն Կարգի 3-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ ԿԸՀ-ն «բոլոր լրագրողների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ», այնուամենայնիվ, Կարգի որոշ դրույթներ անհանգստության տեղիք են տալիս: Մասնավորապես, մտահոգություն են առաջացնում կարգի 9-րդ եւ 11-րդ հոդվածով նախատեսված հավատարմագրման մերժման եւ դադարեցման հետեւյալ երկու հիմքերը. լրագրողի հավատարմագրումը մերժվում է կամ դադարեցվում է, եթե «նա տարածել է ընտրական հանձնաժողովների (պաշտոնատար անձանց) գործունեության մասին այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը» կամ «դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, եւ նրա դատվածությունը մարված կամ հանված չէ»: Հավատարմագրման մերժման եւ դադարեցման այս հիմքերն անընդունելի են հետեւյալ պատճառներով.

– սույն Կարգում նախատեսվում են իրավունքի այնպիսի սահմանափակումներ, որոնք կարող են սահմանվել միայն օրենքով, եւ՝ ոչ ենթաօրենսդրական ակտով,

– լրատվամիջոցների իրավունքներից է բխում ընտրական գործընթացները լուսաբանելու համար լրագրողների ինքնուրույն եւ ազատ ընտրության հնարավորությունը: Այդ ընտրությունը չպետք է կաշկանդված լինի որեւէ կերպ, այդ թվում նաեւ՝ ԿԸՀ-ի կողմից,

– հաշվի առնելով, որ մոտակա ամիսներին լրագրողների բավական մեծ մասը ներգրավված է լինելու ընտրական գործընթացների լուսաբանման մեջ, Կարգը, փաստորեն, արգելք կարող է հանդիսանալ լրագրողի մասնագիտական գործունեության համար՝ զրկելով լրագրողին հավատարմագրման հնարավորությունից «անցյալի մեղքերի» համար, որն էլ անընդունելի է ժողովրդավարական արժեքներ դավանող երկրում,

– Կարգում՝ որպես լրագրողի հավատարմագրումը մերժելու եւ դադարեցնելու հիմք է սահմանվում՝ ընտրական հանձնաժողովների գործունեության մասին այնպիսի տեղեկությունների տարածումը, որոնք չեն համապատասխանում իրականությանը: ԿԸՀ-ն անուղղակիորեն սահմանում է իր համար քննադատությունից պաշտպանվելու լրացուցիչ երաշխիքներ: Տվյալ դրույթն առավել մտահոգիչ է, հաշվի առնելով, 2010 թվականի ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում զրպարտության եւ վիրավորանքի օրենսդրական փոփոխություններից հետո ձեւավորված եւ բազմաթիվ քննադատությունների արժանացած դատական պրակտիկան,

– անկախ նրանից, թե նշված դրույթներն ինչպես կկիրառվեն, նման սահմանափակումների առկայությունը Կարգում արդեն իսկ որոշակի ճնշման միջոց է եւ կարող է անտեղի կաշկանդել լրագրողների աշխատանքը՝ այն էլ պետության համար այսքան կարեւոր ընտրական շրջանում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից պահանջում ենք վերանայել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում լրագրողների հավատարմագրման կարգի 9-րդ եւ 11-րդ հոդվածով նախատեսված՝ հավատարմագրման մերժման եւ դադարեցման հիմքերը:

Երեւանի մամուլի ակումբ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե

Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ-Հայաստան